# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզի Նորաշեն համայնք
ՀՀ Լոռու մարզ գ. Նորաշեն 093475448norashen.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«30»«հոկտեմբերի»2017թվականի N 46-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թվականի թիվ 2387-Ն որոշումով.

որոշում եմ՝

1. Վերականգնել 06-082-0018-0001 ծածկագրի բնակելի տան և օժանդակ շինությունների կառուցման և սպասարկման համար ըստ Նորաշեն համայնքի տնտեսական թիվ 1 գրքից թիվ 11 քաղվածքի հատկացված 0.04324հա տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը:
2. Ճանաչել օրինական Արմեն Մերուժանի Բաղդասարյանի՝ անձնագիր AM 0502508 03.11.2011թ. 039, կողմից 1998 թվականին 0.04324 հա հողամասի վրա կառուցված բոլոր շենք, շինությունների նկատմամբ:
3. Բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 108:
4. Հողամասի սահմանները՝ «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված և Նորաշեն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Հողամասը ընդգրկված չէ ՀՀ 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ:
6. Ճանաչել 06-082-0018-0001 ծածկագրի տակ գտնվող 0.04324 հա մակերեսով տնամերձ հողամասը և նրա վրա կառուցված այլ անձանց իրավունքները չխախտող առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների իրականացված շենք շինությունների նկատմամբ Արմեն Մերուժանի Բաղդասարյանի, Արմինե Վարդգեսի Մկրտչյանի սեփականության իրավունքը:
7. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Բաղդասարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշեն համայնք, գ. Նորաշեն, հեռ. 093475448
էլ. փոստ՝ norashen.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«30» «հոկտեմբերի» 2017 թվականի թիվ 47-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՏՈՒՆ ԹԻՎ 108 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածը՝

որոշում եմ.

Արմեն Մերուժանի Բաղդասարյանին, Արմինե Վարդգեսի Մկրտչյանին, սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի Կ. Դեմիրճյան թիվ 108 տուն հասցեում գտնվող տնատիրությանը տրամադրել ՀՀ Լոռու մարզի Նորաշեն համայնքի Կ. Դեմիրճյան փողոց, տուն թիվ 2 փոստային հասցեն:

Համայնքի ղեկավար՝ Ա. Բաղդասարյան

2017 թ. հոկտեմբերի 30
գ. Նորաշեն